Հավելված 1

Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ԿԽ-011/23 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների 2023 թվականի ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիր) մասնագիտական պատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ քննիչի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը:
4. Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերի, ՀՀ քրեական դատավարության արդի հարցերի, կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի, փորձաքննությունների արդի հնարավորությունների և իրավաբանական գրագրության, հաշվապահական հաշվառման և ֆինանսական իրավունքի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը և կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:
5. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:
6. Ուսումնառությունն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:
7. Ծրագրով նախատեսված դասընթացների ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 134 ակադեմիական ժամ, իսկ քննաշրջանի համար՝ 6 ակադեմիական ժամ:
8. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ: Փորձաշրջանի ընդհանուր տևողությունը 3 շաբաթ է: Փորձաշրջանի ավարտին ունկնդիրը գնահատվում է դրական կամ բացասական:

9. Ուսումնառության ընդհանուր տևողությունը սահմանվում է Ծրագրով նախատեսված ուսումնառության ժամանակացույցին համապատասխան՝ 2023թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

II. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տևողությունը	Դասընթացների ժամաքանակ	Քննաշրջանի ժամաքանակ	Փորձաշրջանի ժամաքանակ	Ընդհանուր ժամաքանակ
Սեպտեմբերի 18 – ից հոկտեմբերի 11-ը	**134 ժամ** (6 դասընթաց) (սեպտեմբերի 18 - հոկտեմբերի 9)	**6 ժամ** (2 քննություն) հոկտեմբերի 16	**3 շաբաթ** սեպտեմբերի 18-ից հոկտեմբերի 11-ը	**140 ժամ և 3 շաբաթ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**134 ժամ**	**6 ժամ**	**3 շաբաթ**	**140 ժամ և 3 շաբաթ**

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IAC-C-001-23	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	4
2.	IAC-C-002-23	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	54
3.	IAC-C-003-23	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	52
4.	IAC-C-004-23	Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցեր	8
5.	IAC-C-005-23	Իրավաբանական գրագրություն	6
6.	IAC-C-006-23	Հաշվապահական հաշվառում և ֆինանսական իրավունք, քննության ընթացքում ֆինանսական տեղեկատվության վերլուծության գործիքներ և մեթոդներ	10

IV. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. IAC-C-001-23. Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները

Դասընթացը պայմանավորված է փորձագիտական գործունեության և փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փորձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դատական փորձաքննության տեսական-իրավական հիմնախնդիրները,
- փորձագիտական գործունեությունը և դրա առանձնահատկությունները,
- քրեական վարույթում փորձաքննությունների (դատական հետքաբանություն, դատաբժշկական, դատահոգեբանական, դատահոգեբուժական, նյութագիտական, դատաձեռագրաբանական, դատաձգաբանական, դատահամակարգչատեխնիկական և այլ) ժամանակակից հնարավորությունները, դրանց նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, փորձաքննությունների կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IAC-C-004-23, IAC-C-005-23 և IAC-C-006-23 դասընթացների հետ համատեղ:

2. IAC-C-002-23. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության և կիրառման արդյունքում բացահայտված թերությունները հաղթահարելու, քրեական դատավարության տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի ու ինստիտուտների, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը, առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և քրեագիտական առանձնահատկությունները,
- ապացույցների և ապացուցման միջոցների հարաբերակցությունը,
- օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման գործընթացում օգտագործելու իրավական կարգավորման խնդիրները,
- բանկային և օրենքով նախատեսված այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը,
- դատական փորձաքննությունների արդի հարցերը,
- գաղտնի քննչական գործողությունները,
- հարկադրանքի միջոցները,
- ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով,
- կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության մեթոդիկան,
- կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և կոռուպցիոն ռիսկերի ստուգման նպատակով բաց աղբյուրներից համապատասխան տեղեկությունների հայտնաբերման, հավաքման, վերլուծության, օգտագործման և գնահատման եղանակներն ու մեթոդները,

- վկաների պաշտպանության ծրագրերը և դրանց մարտավարական ու տեխնիկական մարտահրավերները, ազդարարների պաշտպանությունը,
- քննության ընթացքում տեղեկատվության (այդ թվում՝ ֆինանսական) վերլուծության գործիքները և մեթոդները,
- քրեական դատավարությունում արդիականություն ունեցող այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IAC-C-003-23 դասընթացի հետ համատեղ:

3. IAC-C-003-23. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը անհրաժեշտ է քրեական իրավունքի, մասնավորապես՝ հակակոռուպցիոն ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, քրեական օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության ու կիրառման արդյունքում բացահայտած թերությունները հաղթահարելու, քրեական իրավունքի տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի ու ինստիտուտների, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները և քննության մեթոդիկան,
- կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը,
- ընտրական հանցագործությունների որակման առանձնահատկությունները և քննության մեթոդիկան,
- հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան,
- հանցավոր ճանապարհով ձեռք բերված և արտասահմանում գտնվող գույքի, ակտիվների և այլ արժեքների վերադարձման հիմնախնդիրները,
- տնտեսական հանցագործությունների քննության առանձնահատկությունները,
- ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IAC-C-002-23 դասընթացի հետ համատեղ:

4. IAC-C-004-23. Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դեպքի վայրի զննության տակտիկան,
- առանձին քննչական գործողությունների (քննչական փորձարարությունը, ճանաչման ներկայացնելը, խուզարկություն, նմուշներ ստանալը և այլն) տակտիկան,
- հարցաքննության տակտիկական մեթոդներն ու առանձնահատկությունները,
- քրեագիտական վարկածը և քննության պլանավորումը,
- հանցագործության մեխանիզմի հասկացությունը,
- վարութային գործողություններն էլեկտրոնային եղանակով ամրագրելու ընթացակարգը,
- քրեագիտական իդենտիֆիկացիան, հասկացությունը,
- քրեագիտական դիագնոստիկան, հասկացությունը,
- ապացույցների ամրագրման տեխնիկա-քրեագիտական մեթոդները և ձևերը,
- քրեագիտական լուսանկարահանումն ու տեսաձայնագրումը,
- առանձին հանցագործությունների քննության մեթոդիկան:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IAC-C-001-23, IAC-C-005-23 և IAC-C-006-23 դասընթացների հետ համատեղ:

5. IAC-C-005-23. Իրավաբանական գրագրություն

Դասընթացը պայմանավորված է իրավաբանական գրագրության և փաստաթղթաշրջանառության տեխնիկայի և կանոնների օգտագործման հմտությունների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացի նպատակն է, որպեսզի (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք կարողանան պարզ, հստակ և առավելագույնս ճշգրիտ ու կոնկրետ արտահայտել իրենց մտքերը գրավոր և բանավոր կերպով, յուրաքանչյուր եզրակացություն հիմնավորել իրավական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներով, ինչպես նաև կարողանան վկայակոչել հարաբերությունը կարգավորող իրավական ակտերը, դրանց համապատասխան նորմերը՝ պահպանելով իրավաբանական գրագրության տեխնիկայի և փաստաթղթաշրջանառության ընդհանուր կանոնները:

Դասընթացը ներառում է՝

- «Իրավաբանական գրագրություն» դասընթացի նպատակն ու խնդիրները,
- իրավաբանական գրագրությանը ներկայացվող ընդհանուր պահանջները և դրա առանձնահատկությունները,
- իրավաբանական գրագրության տեխնիկայի և փաստաթղթաշրջանառության ընդհանուր կանոնները, իրավական ակտերի մշակմանը վերաբերող ընդհանուր դրույթները, գրագրության ձևերը, իրավաբանական ակտի լեզվի մատչելիությունը և հստակությունը, բառընտրության և բառագործածության առանձնահատկությունները, իրավական ակտի կառուցվածքը, իրավական ակտերի մասերը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IAC-C-001-23, IAC-C-004-23 և IAC-C-006-23 դասընթացի հետ համատեղ:

6. IAC-C-006-23. Հաշվապահական հաշվառում և ֆինանսական իրավունք, քննության ընթացքում ֆինանսական տեղեկատվության վերլուծության գործիքներ և մեթոդներ

Դասընթացը պայմանավորված է հաշվապահական հաշվառման և ֆինանսական իրավունքի, ինչպես նաև քննության ընթացքում ֆինանսական տեղեկատվության վերլուծության գործիքների ու մեթոդների վերաբերյալ Ունկնդրի գիտելիքների ընդլայնման և հմտությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացի շրջանակներում քննարկման առարկա կդառնան իրավաբանական անձանց իրավական կարգավիճակի, դրանց տեսակների, հաշվապահական հաշվառման հիմունքների (հաշվապահական փաստաթղթեր, դեբիտորական և կրեդիտորական պարտքեր), ստվերային տնտեսության առանձնահատկությունների և դրա դեմ պայքարի ուղիների, ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի կազմակերպման հիմնահարցերի, քննության ընթացքում ֆինանսական տեղեկատվության վերլուծության գործիքների ու մեթոդների վերաբերյալ, ինչպես նաև նշված թեմաներին առնչվող այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IAC-C-001-23, IAC-C-004-23 և IAC-C-006-23 դասընթացի հետ համատեղ: